

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ. և անհատական համարները 7 կոպեկով:


Թիֆլիսում զրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:



ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մեր լրագիրները. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոն. Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՊՈՒՐՆԵՐ. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Փարիզի միջազգային ցուցահանդէս 1889 թվին:

ՄԵՐ ԼՐԱԳԻՐՆԵՐԸ

III

«Մշակ» զուրս գալուց մի տարի առաջ, այն է 1871 թվին, բոլոր Հայոց պարբերական հրատարակութիւնները Ռուսաստանում, դարձան էին արդէն հրատարակվելուց: Գեղեցիկ ամսի 1871 թվին «Մեղու Հայաստան» լրագիրը հրատարակել էր իր վերջին կէս թերթը, յայտնելով որ դադարեցնում է իր գոյութիւնը, Մոսկվայում վաղուց արդէն ոչ մի Հայոց հրատարակութիւն չէր կար, Թիֆլիսում «Հայկական Աշխարհ» արդէն խափանվեցաւ: Ամբողջ Ռուսաստանում միակ էջմիածնի «Արարատ» ամսագիրն էր հայերէն լեզուով հրատարակվողը:

Հէնց որ 1872 թվին սկսեց հրատարակվել «Մշակ», անմիջապէս, չորս ամիս յետոյ կազմակերպվեց «Մեղու Հայաստան» լրագրի նոր խմբագրութիւնը, որ բաղկացած էր այս անգամ համալսարանական եւ բրտատարներէն: Հայտնի էր, որ լրագիրը փորձ փորձեց մրցել «Մշակ» հետ: Մի քանի տարի անցաւ և ահա սկսեցին մին միւսի ետեւից երևան գալ ուրիշ Հայոց լրագիրներ, ամսագիրներ և շաբաթաթերթեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՐԻԶԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ 1889 (ԹԻՒՆ *)

Ամեն մարդ իմացած է որ երեք տարիէն յետոյ Փարիզի մէջ համաշխարհական ցուցահանդէս պիտի լինի և արդէն շատ ուղեւորներ, գիտնականներ, վաճառականներ, կարուստներ, արուեստագետներ և գործաւորներ, երկրագունդի զանազան կողմերէն կը պատրաստուին զայլ օգուտ քաղել գիտութեան և արուեստագիտութեան հրաշալիքներէն, որոնք ի տես պիտի գրուին այդ ժամանակ աշխարհի մայրաքաղաքին մէջ: Մինչև անգամ ոմանք որոնք անյազ սէր ունին յառաջդիմութեան և քաղաքակրթութեան, բայց իրենց նվթական միջոցներ սահմանափակ են, կը ցանկան իմանալ թէ ինչպէս կրնան ներկայ գտնուիլ այդ մեծ հանդէսին: Մենք այստեղ ցոյց կուտանք թէ իրենց և թէ անոնց որոնք առատութեան ունին կը վայելն, այն միջոց որով կարելի է գուարճալի կերպով կատարել այդ հրահանգի և օգտակար ծանադարձորդութիւն: Մեր ցոյց տալիք միջոց ոչ միայն խնայողական է առանց ոչ մէկ զրկում, ոչ մէկ նեղութիւն կրելու, այլև շահաւոր և լաւ է ամենին համար ալ, ինչպէս չքաղաքին, նոյնպէս և հարուստին համար, որովհետեւ թէ գիւրութիւններ կընծայէ և թէ աւելի պատուաբեր կը լինի:

Ահաւասիկ այդ միջոց:

Ֆրանսիացիները նախաձեռնութեամբ, 1889-ի

*) Այդ նամակը, և 1889 թվին լինելու Փարիզի միջազգային ցուցահանդէսի կանոնադրութեան թարգմանութիւնը հայերէն լեզուով ուղարկել է մեզ հայ երիտասարդ, պ. Ժան Բրուսալի, որի գրական աշխատութիւնների մասին մենք «Մշակ» մէջ մի քանի անգամ խօսել ենք և որ այժմ անգամ է ցուցահանդէսի յանձնաժողովը, որպէս ներկայացուցիչ Հայաստանի և արևելեան երկրների բաժնի ցուցահանդէսում: Նա ներկայացուցիչ է «Pour l'Arménie et les pays orientaux». Մեզ խնդրում են տպել այդ և ուղարկել «Մշակ» մի քանի օրինակ ցուցահանդէսի յանձնաժողովին:

Թեր, որոնց մի առ մի յիշելը շատ հեռու կը տանէր մեզ:

Մի բան անուրանալի է, որ «Մշակ» երկարուն պէս հետզհետէ սկսեցին կազմակերպվել երկու որոշ հասանքներ, երկու որոշ ուղղութիւններ հայոց մամուլի մէջ և չէր հաշտելով այս կամ այն մանկավարժական, այս կամ այն պատկերազարդ ամսագիր, այս կամ այն շաբաթաթերթ, որոնք ոչ մի կուսակցութեան, ոչ մի որոշ ուղղութեան չէին պատկանում, հայոց մամուլը Ռուսաստանում արդէն 1872 թվից սկսած մինչև այսօր բաժանվեցաւ երկու որոշ բանակների վրա. մի կողմէն էր կանգնած «Մշակ», միւս կողմէն միւս Հայոց պարբերական հրատարակութիւնները: Առաջին զբաղակ ուղղութիւնը, որի ներկայացուցիչն էր «Մշակ» մաքառում էր հնութեան դէմ և անգաղաք ջանում էր առաջ մղել հայերին, առաջարկելով նրանց նոր իդէալներ, երկրորդը՝ հնութեան, անշարժութեան պաշտպան, ջանում էր անգաղաք պահել հայերին դարերից առաջ եղած գրութեան մէջ:

Ներկու հակառակորդ գրական բանակներին համեմատ և ընթերցողներին, ազգային մտաւոր կեանքով հետաքրքրողների կծու տինդենտն էլ բաժանվեցաւ երկու որոշ խմբերի:

Խմբերից մին, ամենաբազմաթիւը, որ զգում էր արդէն հնութեան դէմ մաքառելու, նոր կեանք, նոր իդէալներ ընդունելու կարիք, զգում էր որ և է առաջադիմութեան, պրոգրեսի անհրաժեշտութիւնը: «Մշակ» կողմէն էր: Միւս խումբը, աւելի սակաւաթիւը, որ բաժանում էր իր մտաւոր

պարագուկներին կարծիքը թէ ազգի գոյութեան միակ և անհրաժեշտ պայմանն է անշարժութիւնը, կազմում էր մեր միւս պարբերական հրատարակութիւնների ընթերցող կծուներէն:

Մեր հասարակութեան պէս մի հասարակութեան մէջ մամուլի կոչումը բոլորովին այլ է, քան թէ աւելի քաղաքակրթութեան և զարգացած ազգերի մէջ: Այնտեղ մամուլի նպատակն է ոչ թէ միայն լրբիչ, դատարարակիչ դեր խաղալ ժողովրդի մէջ, ոչ թէ միայն առաջնորդել հասարակական կարծիքը, բայց և անմիջապէս ներգործութիւն ունենալ հասարակական և քաղաքական կեանքի անցքերի վրա, յարուցելով անհանձնաւոր խնդիրների լուծման վրա: Մեր մամուլի դերը անհամեմատ աւելի համեստ է. մեր լրագրութեան կոչումն է գլխաւորապէս լրբիչ, դատարարակիչ ներգործութիւն ունենալ ազգի վրա, և ոչ թէ վճռել մեծ մեծ հասարակական կամ քաղաքական հարցեր, ներգործել կատարվող երկրութիւնների վրա....

Իր այդ կոչումը այդպէս էլ ըմբռնելով «Մշակ» որպէս լրբիչ, դատարարակիչ օրգան, իր գոյութեան ամբողջ ընթացքում զրկել է իրան որպէս նպատակի, — առաջադիմութիւն, որպէս միջոց, — ամենախիստ, անխնայ ինքնաքննութիւն:

Պարզ է որ այդ տեսակ ասպարիզի վրա «Մշակ» հետ կարող էր մրցել միմյան այնպիսի թերթ, որ պատկանէր նոյն բանակին, որին և «Մշակ» էր պատկանում, որ ջանար նրա տեղը գրաւել և մինչև իսկ դերազանցել նրան, բայց ոչ թէ այնպիսի մի թերթ որ առաջադիմութիւնը վնասաւոր

կար էր համարում, որ ինքնաքննութիւնը վիրաւորիչ և յանցաւոր գործողութիւն էր համարում, որ ազգի համար վրկութիւն և նրա գոյութեան համար միակ պայման էր համարում: — յաւիտեական անշարժութիւնը:

Գտան և հինգ տարի գոյութիւն ունեցող թերթը չէր կարողացաւ մրցել «Մշակ» հետ, չէր կարողացաւ խել «Մշակ» նրա բաժանորդները, որոնց թիւը, ընդհանրապէս, հետզհետէ աճում էր, չէր կարողացաւ համոզել այդ ընթերցողներին անցնել իր կողմը, որովհետեւ հայերի մի յայտնի մասի մէջ արդէն պահանջ էր ծնվել պահպանել մի օրգան որ հնութեան, անշարժութեան թշնամի էր և, պրոգրեսի ներկայացուցիչ:

Եւ ահա երկու թէ երեք տարի առաջ երեւեցաւ կոմիտեում մի նոր Հայոց ամենօրեայ թերթ, որ իր ուղղութեամբ անմիջապէս յայտնվեցաւ որպէս քսան և հինգ տարի գոյութիւն ունեցող թերթի բանակակից, անշարժութեան, խաւարամտութեան և հնութեան պաշտպան և դրօշակակից: Եւ ի՞նչ պատահեց: «Մշակ» մինչև րա բաժանորդներին նոյն և մինչև անգամ աւելի մեծ թւով, իսկ նոր թերթը սպանեց միայն իր բանակակից և դրօշակակից հին թերթին, որովհետեւ խաւարամտ ուղղութեանը պատկանող ընթերցողների կծու տինդենտը այնքան մեծ չէր, որ պահպանէր միանման ուղղութեանը պատկանող երկու լրագիր: Ուրեմն «Մշակ» հետ նոր թերթը չէր կարողացաւ և չէ էլ կարող մրցել, այլ աջողութեամբ մրցեց իր բանակակից թերթի հետ և սրան հասցրեց օրհասականին:

ցուցահանդէսին այցելողների ընկերութիւններ կազմուած են Ֆրանսիայի, Միւսի, Թիւրքի, Լիւսպոնի, Մատրիսի, Ալժիրի և Պուրթուգալի շաբաթաթերթի ընկերութիւն բացարձակապէս անկախ է և միանքին հետ կապուած է միայն «Յունա-լատին ժողովուրդների դաշնակցութիւն» (fédération des peuples Gréco-Latins) անունով որով պիտի ծանցուին 1889-ին: Արմենիայի դաշնազան նահանգներին մէջ բնակող մեր հայրենակիցներ և այլապէս տեղի գտնուող հայ գաղթականութիւններն կրնան հետեւիլ այդ օրինակին: Այս նպատակով մենք ևս կը հրատարակենք ի ստորեւ Ֆրանսիայի ընկերութեան կանոնները որոնք պէտք է օրինակ լինին այս մտքով կազմուելը նոր ընկերութիւնների կանոնադրութիւններին: Ի հարկէ տեղական պահանջներին համեմատ կարեւոր համարուած փոփոխութիւններ, կրճատումներ կամ յաւելումներ կրնան մտցուիլ անոնց մէջ: Այսպէս, շաբաթական վճարուելիք տուրքերն և այդ շրջապայտիւն համար օրողուած ժամանակը (յօդուած 4 և 20) կրնան փոփոխուիլ տեղական հեռաւորութիւններին համեմատ: Պէտք է նկատի առնել նաեւ 50 առ հարիւր (0/5) զեղչերի հաշիւը որ Ֆրանսական կառավարութեան միջոցով պիտի ստացուի փոխադրական և այլ ընկերութիւններէ:

Իսկ այս նպատակով կազմուած ընկերութիւններէ յառաջ գալիք անհատական և ընդհանրական շահերը շատ մեծ են: Նախ իւրաքանչիւր ընկերութիւն որ փարիզ հասնի, պաշտօնապէս և պատուով պիտի ընդունուի Ֆրանսական կառավարութեան, որ ամեն միջոցներ ձեռք պիտի առնէ ընկերութեան հանգիստ և աժան կերպով փարիզի մէջ տեղաւորուելը ապահովելու համար ուր ապրուստը չափազանց կը սղանայ այդ միջոցին, մասնաւոր օտարականներին համար: Ֆրանսական կառավարութիւնը հոգ պիտի տան որ այդ ընկերութիւնների անդամներին հարկ և տուրք չառաւար ծառայութիւնները մատուցուին, անոնց պիտի տայ այցելել Յուլիանի անդամներին և փարիզի իշխանութիւններին. մէկ խօսքով, անոնց տրամադրութեան տակ պիտի դնէ գործակալութիւնը, ամեն տեսակ տեղեկութիւններ և դրօշակներ իրենց հայրթայիւնը և կարելի եղածին չափ աւելի

օգուտներ իրենց մատուցանելու համար: Անոնց ամեն տեղ կէս գնով զեղչեր չնորհել պիտի տայ և այլն, և այլն: Ահաւասիկ ինչ անհատական շահեր պիտի կրնան առաջ գալ, որոնք անտարակոյս հրապարակ են ամենին համար ալ:

Ուրեմն որպէս հարկաւոր է որ մեր հայ հայրենակիցներ կազմեն իրենց մէջ վերադառնալ ընկերութիւններն, որոնք միանգամայն թէ կը բարձրացունեն մեր վաճառականական, արհեստագիտական և հողագործական դերը և թէ մեր երկրի վրայ կը հրաւիրեն օտար վաճառականութեան ուղադրութիւնը, որի բնական հետեւանք կը լինի ներմուծել այնտեղ վերանորոգումներ և հաղորդակցութեան գիւրութիւններ. վստի զի մեր երկիր այժմ դժբաղդապէս անձանթ մնացած է դեռ Եւրոպայի վաճառականներին: Ֆրանսական կառավարութիւնը այս կերպով մի տեղ ալ կը շնորհէ մեզ Յուլիանի անդամներին մէջ, հոն ի տես դեռու համար մեր երկրի արհեստագիտական և հողագործական զանազան արտադրութիւններն, ինչպէս նաեւ նորա ամէն մէկ նահանգի տարադրները (costume):

Այս նպատակով կազմուելիք ընկերութիւնները պէտք է որ մեզ իմացունեն իրենց կազմութիւն և հաղորդներ իրենց կանոնադրութեանը զի մենք ալ կարենանք զանոնք նշանակել տալ Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան: Այդ ընկերութիւնների կազմութեան և Յուլիանի անդամների կերպին և պայմաններին վերաբերելու բոլոր տեղեկութիւններին համար զիմեղ ուղղակի հետեւելու հասցէին.

Monsieur Jean Broussali
5, Rue Casimir Delavigne, PARIS

Մենք կարող ենք նաեւ «Ֆրանսական Արհեստագործութեան Արտադրութիւնների Պաշտպանութեան և Ցարածման Միջոցառում»-ին (Syndicat de Protection et de Propagation des produits de l'Industrie Française) հետ յարաբերութեան մէջ դնել մեր հայ վաճառականներին անոնք որք կըրնան հարկաւոր երաշխաւորութիւններ ներկայելու Այս Միջոցառում (Արհեստական Հողագործութիւն) որ հաստատուած է մօտերս փարիզի մէջ Ֆրանսական արտադրութիւնների արտածութեանը օգնելու և զայն պաշտպանելու նպատակով, արդէն 300-է աւելի գործարաններ ունի իւր վերակա-

ԺԱՆ ԲՐՈՍԱՆԻ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդուած 1.—1885 Մարտ 1-ին, գործաւորներ և արհեստագործներ իրենց մէջ միացած, Թուրինի Յուլիանի անդամներ այցելող գործաւորների նախաձեռնութեամբ մի ընկերութիւն կազմած են Ֆրանսիայի մէջ, 1889-ին փարիզի մէջ լինելիք Միջազգային Յուլիանի անդամներ այցելող նպատակով:

Յօդ. 2.—Այս ընկերութեան մասնակցելու խնդրագիրները պէտք է որ ստորագրուած լինին երկու ընկերներէ և խնդրագրուին որ մի և նոյն ժամանակ պէտք է որ ընդունի առաջադրուած կանոնները: 1888 զեկտ. 31-ին յետոյ այլևս անգամ չընդունուի:

Յօդ. 3.—Գործաւորների փոխադարձ օգնութեան ընկերութիւնները և արհեստական ընկերութիւնները իրաւունք ունին իրենց անդամներէ մէկը կամ մի քանին իւր ընկեր ներկայացուցել, պայմանով որ ընդունին այս կանոններ:

Յօդ. 4.—Ընկերները իրենց անուն արձանագրուած ատեն, «մէկ Ֆրանկ» ընդունելութեան տուրք կը վճարեն, ընկերութեան հիմնադրական և վարչական ծախքերին նպատակու համար: Ասկէ զատ պիտի վճարեն Հաղթական տուրք մէկ Ֆրանկ, սկսեալ 1885-ի մարտ ամսի առաջին շաբաթէն մինչև 1889-ի յուլիս. ամսի վերջին շաբաթը: Անոնք որ ուշ կանգամակցին, պէտք է որ անցած բոլոր շաբաթական տուրքերը վճարեն

Մի ամսագիր կամ նրա շարունակութիւն կազմող մի շարք թերթերն էլ, որ ճշմարիտ է, երբեք այն աստիճան խառնարամիտ չէր և անշարժութեան այն աստիճան կատարելի պաշտող չէր, որքան վերոյիշեալ երկու լրագրիւնները, բայց՝ որ երբեք և անկեղծ առաջադէմ չէր, նոյնպէս չը կարողացաւ մրցել «Մշակի» հետ:

Ինչ է, վերջապէս, այդ բոլոր իրողութիւններէ պատճառով: Պատճառն այն է, որ «Մշակի» հետ կը կարողանայ մրցել միայն այնպիսի թերթ (եթէ նա կերելայ), որ իր ուղղութեամբ կը պատկանի «Մշակի» բանակին, որ կը լինի անկեղծ առաջադէմ, որ կը ջանայ նրա տեղը բռնել և կը գերազանցէ նրան, որովհետեւ հայոց հասարակութեան մէջ կայ արդէն մի որոշ կոնսիդերանտ ընթերցողներ, որ պահանջ ունի մի առաջ մղող թերթի մէջ, և երբ որ մէկը կայ որ լրացնում է այդ կոնսիդերանտի պահանջները, նրա հետ խառնարամիտ, կամ կեղծաւոր առաջադէմը մտքի չափ անգամ մրցել չեն կարող:

Մեր լրագրութեան, մեր մամուլի գոյութեան վերջին տասն և հինգ տարւոյ ընթացքում «Մշակը» միակ առաջադէմ հրատարակութիւն լինելով, միակ էր որ գրական ուղղութիւն ունէր, նա ջանում էր քանգել հինգ և առաջարկում էր նորը, իսկ միւսների պաշտօնը այդ ամբողջ ժամանակաւ ընթացքում և մինչև այժմ էլ միմիայն նրանում է կայանում, որ երբ որ «Մշակը» մի նոր միտք է յարուցանում, նրանք հերքում են այդ միտքը, աշխատում են մեղմել այդ միտքը: Ուրեմն նրանց պաշտօնը, նրանց գործունէութիւնը միմիայն բացասական է:

Նրանց գործունէութիւնը այն աստիճան բացասական է, որ իրանք երբեք մի ինքնուրոյն միտք յայտնել չեն կարող, այլ սպասում են որ «Մշակը» մի բան ասի, որպէս զի իրանք անմիջապէս հակառակն ասեն: Երբ որ «Մշակը» մի քանի շարքով առաջնորդող յօդուած չէ գրում, նրանք էլ գրելու նիւթ չունեն, երբ «Մշակը» մի տարով ընդմիջեց իր գոյութիւնը, նրանք սկսեցին քիչ քիչ օրհասականին հասնել, եթէ «Մշակը» մի երեք տարի գոյութիւն չի ունենայ, կամ բոլորովին կը դադարի, նրանք էլ փոքր առ փոքր կանհետանան:

Իրենց տոկոսներով հանդերձ, որպէս զի միւս ընկերակիցներին հաւասար վիճակ ունենան:

Յօդ. 5.—Հինգ շարքով շարունակ իւր տուրք չը վճարող ընկերի անունը կը ջնջուի ցանկէն և կը կորցնուի նա իւր ընկերական բոլոր իրաւունքներ: Այնու ամենայնիւ, կրնայ նորէն տէր դառնալ իւր բոլոր իրաւունքները, խնդրագրով դիմելով վարչական խորհուրդին և յետ մնացած իւր շարքովական բոլոր տուրքերն վճարելով իրենց տոկոսներովն հանդերձ:

Յօդ. 6.—Եթէ մի ընկեր հիւանդութեան պատճառով և կամ վէճի տակ կանչուելով չը կարողանայ ընկերութեան հետ փարիզ երթալ, իւր վճարած շարքովական տուրքեր կը վերադարձուին իրեն այն ժամանակ երբ ընկերութիւնը կը վերադառնա փարիզէն: Եթէ ընկերներէ մին մեռնի, իւր բաժին անմիջապէս կը վերադարձուի իւր ընտանիքին: Այլ սակայն բոլոր այս պարագայներէ մէջ այդ ընկերի բաժին վերաբերող վարչական ծախքերը վար կը դրուին վերադարձուած գումարէն:

Յօդ. 7.—Այն ընկեր որի հիւանդութիւն կը հաստատուի, իրենց շարքովականները վճարումը ուղարկողներին համար դրուած 5-րդ յօդուածի դրուութեան տակ չիյնար: Այդ յօդուածէ աղտու կը լինի քանի որ անկարող կը մնայ աշխատելու: Իւր կատարեալ առողջութիւն ստանալէ յետոյ պէտք է որ վճարէ յետ մնացած շարքովականներն որոց վճարման պայմաններին համար խորհուրդը կը համաձայնուի իրեն հետ:

Յօդ. 8.—Այն ընկեր որ մեկնելու ժամանակ մի դէպքով կարգիլուի ընկերութեան հետ փարիզ երթալէ, պիտի կրնայ իւր իրաւունքները փոխանցել իւր վստահացած մէկ անձի վրայ, միայն թէ պէտք է որ խնդրագրով դիմէ խորհուրդին, ընկերների ընդունելութեան համար այս կանոնագրի 2-րդ, յօդուածին մէջ հաստատուած սրամազրութիւններին համեմատ:

Յօդ. 9.—Ընկերութիւնը կը ներկայացունեն և կը վարեն հինգ խորհրդականներէ բաղկացած մի խորհուրդ, մէկ վարչական խորհրդական, մէկ գանձապետ և երկու քարտուղարներ: Խորհուրդը

գրական ասպարիզից, որովհետեւ *raison d'être* այլ ևս չեն ունենայ, եւ նրանք միայն այն ժամանակ նորից երևան կը գան, երբ «Մշակը» կամ նրա նման մի ուրիշ առաջադէմ ուղղութիւն ունեցող թերթ երևան կը գայ:

«Մշակը» առանց այդ միւս ժամանակակից հրատարակութիւնների կարող է շարունակել ապրել և գոյութիւն ունենալ, իսկ նրանք առանց «Մշակի» ապրել չեն կարող, որովհետեւ նրանց պաշտօնը, նրանց բան ու գործը միայն նրանումն է կայանում որ պատասխանեն «Մշակին»:

«Մշակը» տարիներով կարող է, եթէ ուզենայ, ոչ նրանց անունը յիշել, ոչ էլ քաղաքական կերպով ակնարկել նրանց վրա և այդ ամենին չի վնասի իր գոյութեանը: Իսկ մեր միւս թերթերի գոյութեան անհրաժեշտ պայմանն է բանակուել «Մշակի» դէմ, թէկուզ նրա անունը պարզապէս չարտասանելով:

Եւ եթէ մի տարի, մի քանի ամիս, մի քանի շարքով անգամ նրանք քաջութիւն կունենան վճռել թէ բացարձակ և թէ բոլորակամ կերպով ամենին չը յիշել «Մշակին» անունը, կը վճռեն այլ ևս չը բանակուել «Մշակի» դէմ, այդ իրանց համար կործանիչ վճիռն ընդունելուց յետոյ, նրանք իրանք յանկարծ կը սկսեն զգալ որ իրանց գոյութիւնը հայոց գրական ասպարիզում միանգամայն աւելորդ է դառնում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Ծանր սրտով ենք այս անգամ գրիչ առնում խօսելու հայոց թատրոնի մասին, քանի որ գուշակում ենք (տայ Աստուած, որ սուտ դուրս գայ մեր մարգարէութիւնը) թէ հեռու չէ այն ժամանակը, որ պէտք է լուենք... Եւ շատ հասկանալի պատճառով կը լինի այդ բանը... Թատրոնը կը փակվի, եթէ հասարակութիւնը շարունակի նոյն անտարբերութեամբ վերաբերվել դէպքերը: Ամօթ է, մինչև անգամ ասել, Թիֆլիսի նման քաղաքում, որտեղ 40,000 աւելի հայ կայ, շարքովական մի կամ երկու ներկայացումն

պէտք է որ ամիսը մի անգամ իւր սովորական նիստ անէ գանձապետին ներկայացուցած հաշիւը ստուգելով ստորագրելու, Ընկերութեան վիճակին տեղեկանալու և մի և նոյն ժամանակ Ընկերութեան վարչական բոլոր պէտքերը հոգալու համար: Հինգ խորհրդականները իրարու յայտը դադար կը վարեն նախագահութեան պաշտօնը, իրենց անդամակցութեան հնութեան կարգով և իւրաքանչիւր երկու ամիս Զեն կարող իրենց տեղ փոխանորդ դնել, ի բաց առեալ գործով բացակայ գտնուելու և կամքէ անկախ պարագայներն խորհրդի անդամները կընտրուին գաղտնի քուէով և ձայների առաւելութեամբ: Իւրաքանչիւր տարի, մինչև 1888-ի վերջ, խորհրդի անդամների կէտը կը փոխուի վիճակով: 1888 տարուն վերջ ընտրութիւնները կը մնան իրենց պաշտօնի վրայ մինչև ընկերութեան նպատակին իրագործումը: Վիճակով դուրս հանուած խորհրդականները կրնան միշտ վերընտրուի լինիլ:

Յօդ. 10.—Վարչական խորհուրդը կորոշէ ընկերների ընդունելութիւնը: Եթէ մեթոդական որոշում տայ, մեթոքած խնդրարկուն կրնայ դիմել Ընդհ. Ժողովին որի տուած որոշումը վճարական է:

Յօդ. 11.—Ընկերութիւնը ամեն տարի փետրվար ամսին մէջ ի ժողով կը գումարուի: Այդ գումարում պարտաւորիչ է վարչական խորհուրդը իւր վարչական տեղեկագիր և սենդիքներն (հոգաբարձու) ալ ելևմտական վիճակին վրայ իրենց տեղեկագիր կը ներկայեն տարեկան այդ Ընդհանուր Ժողովին: Յետոյ վիճակով դուրս հանուելիք խորհրդականներն անուններին վրայ վիճակ կը ձգուի, ինչպէս գրուած է 9-րդ յօդուածին: Այնուհետեւ տեղ ուրիշներ կընտրուին: Այնուհետեւ նաև «սենդիք»-ներ նոր տարու ելմամբ տացոյցը (բիւլէթէ) վերաքննելու համար: Այդ սենդիքներն խորհուրդի անդամներէն չեն լինիլ: Արտասովոր ընդհանուր Ժողովներ ալ կը գումարուին ամեն անգամ երբ վարչական ժողովը հարկ համարի: Ժողովին հրաւերները կը լինին մասուլի միջոցով, հրատարակելով Ֆլորանսի բոլոր լրագիրներին մէջ:

է լինում և կասկածում ներկայացման երեկոյեան հազիւ է ժողովվում 50 բուրլի, ինչպէս անցեալ օրը: Այսպիսի սեօրն եր ունենալով դրամատիական ակումբի վարչութիւնը ստիպվում է օգտվել դրամադիւնից (և այդ արդէն սկսված է), որ կազմված է երեք ողորմելի հազարից: Գրամագուլուն էլ կը վերջանայ և կօմիտեմին միայն կը մնայ թէ ինչ արհեստներ, ինչ ան ու վաներ են բարձրացնում, որ թատրոնը փակվեցաւ, թատրոն չունենք և այնիւ Գանի չունենք լալիս ենք, իսկ եղած ժամանակը պահպանել չենք ուղում: Հասարակութիւնը չէ կարող արդարաւալ թէ խմբի կազմակերպութիւնը վատ է. խմբի մէջ կան լաւ ոյժեր, չը խօսելով անգամ պ. Արամեանի մասին, մինչև այժմ տուած պիեսները անցել են բաւարար անամբողջ: Պիեսները ընտրութիւններն են, որ մի փոքր մտածել են տալիս: Օրինակ, ինչ միտք կար ներկայացնելու Վ. Ալեքսանդրովի-Կրիլովի *) (Ժամանակակից Մեր) կօմիդիան: Բովանդակութեան մասին երկար չենք ուղում խօսել. դա մի «պատկիլ» է նոր երկրասարդութեան դէմ, գործող անձինքը նկարագրված են շատ անգոյն կերպով, չը կայ ոչ մի վերջացած բնութագրութիւն: Ի պատիւ մեր դերասանական խմբին պէտք է ասենք, որ այդ դատարկ պիեսն նա խաղաց գեղեցիկ կերպով. ներկայացման ընթացքը քանի քանի անգամ ընդհատվում էր բուռն ծախսարարութեանը: Այդ երեկոյեան հերոս կարելի է համարել պ. Միքայէլանցին, աստիճանաւոր փոխմանեցիկ դերում: Պ. Միքայէլանցի դեռ շատ ժամանակ չէ որ բեմական ասպարէզն է դուրս եկել: Մինչև այժմ նա չէ ունեցել մի այնպիսի չիօլա, որ կարողանար առաջ գնալ: Բայց ինքը, ինչպէս երևում է, շատ ուսումնասիրում է իր դերը: Կայ երկու բան, որ նրան խանգարում են, ձևերի անտաշութիւնը (Мѣтѣбѣ) և ձայնը: Պարոնի ձայնը, որ բաւական դուրեկան է, ցած խօսելով, ձգող և անախորժ տպագրութիւն է գործում բարձրացած ժամանակի Պ. պ. Չմէլեան և Արեւեան նոյնպէս շատ գեղեցիկ կերպով տարան իրանց դերերը: Տ. Չար

*) Կարծում ենք հասարակութեանը աւելի հեռաբարձական է իմանալ հեղինակի անունը, քան թարգմանչի: Աֆիշաների վրա տպված է միայն վերջինի անունը: Աֆիշա կազմողը ուղարկութիւնն ենք դարձնում այս բանի վրա:

Յօդ. 12.—Ընկերութիւնը կրնայ բաժնուիլ արհեստակիցներին խումբերի (էստաֆ) որի պայմանները կորոշուին մի կանոնագրով:

Յօդ. 13.—Շարքովական տուրքերի հաւաքումը կը յանձնուի մի հաւաքչի գոր գանձապետը կընտրէ և խորհուրդը կը հաստատէ իւր հաւանութեամբ:

Յօդ. 14.—Իւրաքանչիւր շարքով, կամ ամենէն ուշ իւրաքանչիւր 15 օրը մի անգամ, գանձապետը հաւաքուած ստակները կը յանձնէ Ֆլորանսի խնայողական Մտուկին ուր իւր հաշուետեքիկը (livret) արձանագրուած պէտք է լինի ընկերութեան անունով:

Յօդ. 15.—Ամեն ամիս գանձապետը պէտք է ներկայէ Մտուկին վիճակը վարչական խորհրդի քննութեան և վաւերացման, որ կը ստորագրէ զայն:

Յօդ. 16.—Միջոցառական Մտուկին ոչ մի գումար չի կրնար հանվել, առանց Ընդհանուր Ժողովի որոշման որ կը հաստատուի բոլոր խորհրդականների ստորագրութիւններով:

Յօդ. 17.—Ստորադրող չը պիտի կրնայ նիստ անել եթէ բոլոր անդամները ներկայ չը գտնուին: Բացառութիւն կը լինի երբ կամքէ անկախ բացարձակ զօրաւոր պատճառներ պատահին, այդ ժամանակ բացակայ անդամը կրնայ խորհրդի անդամներէ մէկը իրեն ներկայացուցիչ ընել:

Յօդ. 18.—Ընդհանուր Ժողովին նիստը վաւերական լինելու համար պէտք է որ ընկերութեան բոլոր անդամներէ գոնէ երրորդ մասը ներկայ գտնուի: Եթէ օրինական այդ թիւ չը լրանայ, առաջին հրաւերէն յետոյ երկրորդ անգամ ևս մի հրաւեր կը լինի և այս անգամին ժողովը իւր որոշումներ կատար քանի հօդի ալ ներկայ գտնուին: Որոշումները կը վաւերացուին ձայների առաւելութեամբ և պարտաւորիչ կը լինին բոլոր ընկերների համար, նոյն իսկ բացակայներին համար:

Յօդ. 19.—Ամեն մէկ ընկեր պէտք է որ մի տեղեկագիր խմբագրէ իւր արհեստի վերաբերեալ աշխատութիւններին վրայ: Այլ սակայն մի և նոյն արհեստէ կողմ ընկերներ կրնան միանալ

բել, որ այժմ կատարում է և դրամատիական դերասանահիններ և էնթենիները դերեր, բաւականացուցիչ էր: Ունի խօսելու անախորժ մի քանի ձևեր: Թիլլ էր պ. Արայեան:

Պ. Արամեան կատարեց պ. Ա. Եղեկեանի «Տարնոյ ծերը» անունով մանօղորդ: Մանօղորդը դրուած է մի փոքր ծանր և մութ լեզուով, այնպէս որ դժուար հասկանալի է:

Ներկայացումը վերջացաւ պ. Չմէլեանի «Մախմուր սալօփա մնաց» վոդևիլով: Գերասանների ներդաշնակ խաղը անվերջանալի ծիծաղ էր յարուցանում հասարակութեան մէջ:

Գալ հինգշաբթի կը ներկայացվի Մօլեթի «Տարտիֆ» կօմիդիան. պ. Արամեան առաջին անգամ կը կատարի Տարտիֆի դերը:

Nemo

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Հոկտեմբերի 11-ին

Տորոնի հարցը աղմկալի վէճերից յետոյ մինչև այսօր անհետանք է մնացել, գործի մոռացման պատճառով: Այլի ընկնող օրվայ հարցը կազմում է այժմ այն, որ Ղուբայում սկսել են աշխատութեամբ և եռանդով ցորեն ժողովել. հաւաքողները մէկը պ. Արշակ Սաղաթեկեանցն է, որ արդէն պատրաստի ցորեն ունի ժողովում մինչ 15,000 պուդ և շարունակում է ժողովելու: Նա պուդը առնում է և առել է 40 և 45 կօպէկով, համարեա աւելի 10—15 կօպէկ պուդին անցեալ տարվայ նշանակված գներէ: Անցեալ տարի ցորեն ծախված էր այստեղ 30—35 կօպէկով պուդը և մինչև անգամ տարվայ ամենայն պաշարը պահվելուց յետո, արտահանում էր ուրիշ տեղ այդ մթերքը ծախվելու համար: Փոխանակ չնորհակալ մնալու, որ մէկը յայտնվել է և ցանկութիւն է յայտնում ցորեն առնելու առանց դժուարութիւն և նեղութիւն ներկայացնելու ծախողին, որ աւելի է շահվում, մանաւանդ որ առևտուրը կատարվում է ծախողի չեմբուս, դաւթում, այնու ամենայնիւ դուք շատ կը լսէք տրտունջներ առնողի դէմ: Բայց ցորենը իմացեցել է ուրիշ տեղ, բայց սովը տիրել է ուրիշ քաղաքում, բայց սովը և մեղ կը սպառնայ, թանկութիւն կընկնի, ինչու որքան ծախեց, կամ արժանի ծախեց: Եւ այդ տեսակ շատ կարծիքներ, դատողութիւններ կը լսեք դուք: Ոստիկանու-

հաւաքաբար մի տեղեկագիր խմբագրելու համար և այս կերպով ազատ մնալ իւրաքանչիւրն մի մասնաւոր տեղեկագիր ներկայելէ: Այդ տեղեկագիրներ պիտի ներկայացուին խորհուրդին, փարիզէն վերադառնալէ երկու ամիս յետոյ: Մի քննիչ յանձնաժողով (ժուրի) պիտի ընտրէ նոցա մէջէն լաւագոյնները, որոց հեղինակներին պատուաբեր վարձատրութիւն պիտի լինի: Տրուելիք վարձատրութիւնների քանակը և որակը պիտի որոշուին իւր յարմար ժամանակին մի մասնաւոր կանոնագրով:

Յօդ. 20.—Փարիզ երթալու ճանապարհորդութիւնը պիտի լինի 1889-ի օգոստոս ամսին: Այդ շրջադարձութիւն պիտի տես տաս և հինգ օր, ճանապարհորդութեան օրերն ալ միասին հաշուելով:

Յօդ. 21.—Ընկերութիւնը չը պիտի կարենայ միջամտել իւր կազմութեան նպատակէ դուրս ո և է գործի:

Յօդ. 22.—Եթէ այնպիսի յեղակարծ գէպեր պատահին որ արգելեն Ընկերութեան այցելութիւնն ի Փարիզ, Ընկերութիւնը պիտի կրնայ իւր դրամագուլուն գործածել մի ուրիշ բանի, կամ թէ ընկերակիցներին վերադարձնել զայն: Վերջին պարագային մէջ, յայտնի բան է, որ ընկերութիւնը կառավարելու համար արդէն եղած ծախքերն հաշուեն վար կը դրուին: Վճարուած ստակները բաշխուած կը յանձնուի մի բաշխարար մասնաժողովի, որ կընտրուի Ընդհանուր Ժողովին:

Յօդ. 23.—Մասնաւորապէս ճանապարհորդութեան և փարիզ բնակութեան վերաբերեալ միւս բոլոր կարգ ու կանոնները կը պատրաստէ խորհուրդը մի այնպիսի յարմար ժամանակ որ կարելի լինի նախապէս ենթարկել Ընդհանուր Ժողովին քուէարկութեանը:

Յօդ. 24.—Իւրաքանչիւր ընկեր պիտի ընդունի մի օրինակ այս կանոնագրէ, որին կցուած կը լինի իւր ընդունելութեան վկայագիրը:

Վաւերացուած 1885 փետրվար 13-ի Ընդհանուր Ժողովի մէջ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ (Ստորագրութիւն հինգ անդամների)

բանին մի այնպիսի բնաւորութիւն կը տայ, որ զա բարոյական մեծ ազդեցութիւն կունենայ Բոլ-
գարիայի ընդհանուր քաղաքականութեան ընթաց-
քի վրա:

ՏԻՐՆՈՎՈ, 16 հոկտեմբերի: Վերջնականապէս
վճարած է աղագային մեծ ժողովը բանալ հոկտեմ-
բերի 19-ին:

ՎԱՐՆԱ, 16 հոկտեմբերի: Ռուսաց մի նաւ,
150 մարդով այստեղ հասաւ. միւս նաւին սպա-
սում են: Գեներալ Կառլաւս յայտարարեց, որ
յեղափոխութեան մէջ մասնակցող սպաներին
զատապարտելը պատճառ կը տայ Ռուսաստանին
զբաղան միջոցներ ձեռք առնելու:

ՎԻԵՆՆԱ, 16 հոկտեմբերի: Միտրոպոլիտ Կլե-
մէնտ համաձայնում է միայն այն ժամանակ
անցնել Թագաւորի մօտ ուղարկելով պատգամա-

ւորութեան գլուխը, երբ կազմակերպ ձեռքակա-
լած սպաները Յանսովի և Կարապետովի կուսակ-
ցութիւնները, երևում է, որ ներկայ չեն լինի
աղագային մեծ ժողովին:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԿԱԶԱՆ. Պ. Ա. Զախարովի բրոշիրը «Ар-
мянская поэзия въ лицѣ Р. Патканяна» ու-
ղարկեցինք ձեզ:
ՍԱՄԱՐԱՍ. Հ. Մ. Դ. Շարունակեցէք գրել տե-
ղական կարեր հարցերի մասին: Յայտնեցէք մեզ
ձեր այժմեան հասցէն:

Խմբագիր-հրատարակող ԳԻՏԻՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ

ՊԱՐՅԻՄԸՐԻ

ԲՐՈՎԱՐ ԵՒ ԸՆԿ.

Ֆարքիայից

Որ արժանացրած է եղել բազմաթիւ մեղայնների համաշխարհային ջուշահանդէս-
ներում, կարելի է ստանալ բոլոր ամենալաւ մագաղիներում

ՌՈՒՍԱՅ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

9—12 (Շ)

ՅՈՐԵՆԻ ԵՒ ԿԵՐՍԻՆԻ ՍԿԼԱԴ

Պատիւ ունենը յայտնելու, որ մենք բացած ենք ֆոթի քաղաքում, Ռիօն գետի վրա, ցորենի
սկզբի, կէրօսինի բեղերի վրա, և տակաւներ ու ժեստեան կաներ պատրաստող գործարան:
Ցորենի սկզբի, որ նոր ու ամուր չիտիւթիւն է երկաթեայ ծածկոցով, բաղկացած է չորս բա-
ժանմունքից, և կարող է զետեղել իր մէջ հարիւր վազոն հացահատիկ: Յիշեալ սկզբը միացրած է
մի կողմից Կովկասեան երկաթուղու, և միւս կողմից Սև ծովի նոր բուխտայի հետ, և ունի այն-
պիսի յարմարութիւններ, որոնք միջոց են տալիս ամենայն տեսակ ապրանքներ ստանալ և յանձնել
նաւերին, ըստ որում ծախսն էլ ապրանքը վերափոխելու վրա է ժամն է նստում:

Մեր սկզբը կընդունէ իր մէջ ժամանակաւոր պահելու համար ցորեն և այլ հացահատիկներ
ամեն ցանկացողից, վերցնելով մինչև 15 օրվայ համար՝ փութին մէջ կօպէկ, կամ վազոնին 6 րոպէ:
Մեր սկզբը յանձն է առնում ստանալ ցանկացողից ցորեն և այլ հացահատիկներ ու վաճա-
ռել նրա համար, վերցնելով սկզբի օգտին փութին մէջ կօպէկ, կամ վազոնին 6 րոպէ, ըստ որ-
ւում ապրանքը սկզբում մինչև 10 օր պահելու համար ոչինչ վճար չէ պահանջվում:

Ցանկացողները վաճառել մեզ իրանց ցորենը կամ ուրիշ հացահատիկներ, պիտի ուղարկեն
մեզ իրանց ապրանքի նմուշը (օրրադիկ), որից յետոյ ապրանքը կը գնահատուի երկու կողմի հա-
մաձայնութեամբ:

Մեր նախագործարանը ոչինչ արգելք չի լինի ցորենի սկզբին որովհետև զետեղված է առան-
ձին շինութեան մէջ և գտնվում է բաւական հեռու ցորենի սկզբից:

Մեր կէրօսին և տակաւներ ու ժեստեան կաներ պատրաստող գործարանը նոյնպէս ունի ամե-
նայն տեսակ յարմարութիւններ: Նա պատրաստում է էժան գնով տակաւներ ու ժեստեան կաներ, և
ընդունում է նորոգելու համար հին տակաւներ ու ժեստեան կաներ:

Մենք յանձն ենք առնում կէրօսինը ընդունել ու ածել շատ շափաւոր գնով:

Մեր տակաւագործարանը կարող է պատրաստել մեծ քանակութեամբ տակաւներ, իսկ ժեստեան-
կաներ չիտող մեքենաները առ այժմ կը պատրաստեն օրական 1,200 ժեստեան կա, իսկ փոքր ժա-
մանակից յետ աւելի մեծ քանակութեամբ:

Յոյս ունենք, որ մենք յանձնարարութիւններ կստանանք մեր երկրի վաճառականներից. մենք աչ-
խատելու ենք յարաբերութիւն սկսել արտասահմանեան վաճառատների հետ և բաւականացնել մեր
երկրացի վաճառականներին:

Մեզ առանձին պայմաններ առաջարկել կամեցողներին խնդրում ենք նամակով դիմել մեզ
հետեւալ հասցեով.

Поти, Очагауы и Тараеуы
5—10

Այս տարուայ օգոստոսի 1-ից բացուեցաւ Թիֆլիսում (Միքայէլեան կամուրջի
վրա №2 և 30)

ՆՈՐ—ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՅ՝

ԴԱՍԱԿԱՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԵՏՈՅԲՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔՈՎ

«Նոր—Գրավաճառանոցում» վաճառվում են ամեն լեզուներով դասական և ընթերցա-
նելի, անկազմ և կազմած գրքեր (հասարակ կազմ 15 կ. իսկ կաշի կազմ 30 կ.):

Դասական պիտույքներ՝ տետրեր, քարէտախտակներ, քարէզներ, մատիւներ, գրչիւնը,
գրչաթիւթեր, թանաքամաններ և այլն: Տետրերը և քարէտախտակները լինում են տողած
և անտող: Պատուիրողները մեծութեան և փոքրութեան հետ պէտք է որոշեն գծի տեսակները:

Գրավաճառանոցը ընդունում է ամենայն տեսակ գրքեր՝ կօմիսիայով վաճառելու հա-
մար: Ամեն տեսակ լրագրի և յայտարարութիւնների ստորագրութիւն (թէ տեղական և թէ
Ռուսաստանի), տպագրական և կաղմարարական յանձնարարութիւններ և զանազան տեղե-
կութիւններ գրքերի և դասական պիտույքների վերաբերութեամբ:

Պատուիրողները կատարվում են չուտ և ամենայն ճշգրտութեամբ: Թիֆլիսում տպած գրք-
երի և դասական պիտույքների գումարով գնողներին զիջումն է լինում:

Ճանապարհածախը գնողների վրա է:

Պատասխանի համար պէտք է 7 կօպէկանոց փոստի մարկա ուղարկել:

Օտար քաղաքներից դիմում են. Тифлисъ, «Новая Книжная Торговля», на Михай-
ловскомъ мосту, №29 и 30.

9—15

ԿՈՓԷ ՄՈՎԿՈ

(II. 4907)

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.
31—50 (2)

Լոյս տեսան և վաճառվում են Կենտրոնա-
կան գրավաճառանոցում Ս. Մանգինեանի Ռու-
սաց լեզուի դասագիրքը առաջին և երկրորդ
տարուայ համար և այլ դասագիրքը գործ ածելու
համար առաջնորդութիւնը «Ռուսաց լեզուի»
դասագրքի համար եղանակի վերնագրով: Առաջինը
արժէ 25 կօպ. երկրորդը—60 կօպէկ:

6—6

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՆԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Զորքաւորի, հոկտեմբերի 29-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շողեւաւոր, նաւա-
պետ ՇԷՆՏ (SCHEULT) զուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրգու, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Րէնօնին, նախկին Արժ-
րուների գաղութում, № 103.

2—4

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏՈՒԹԻՒՆ ՍՍԱՅԱԾ
ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿԵՂԵՂ

ՄԻՇՈՒՆԱՅ



ՄԵՆ ԵՒ ՓՈՒՐ ՄԿԵՆԲԸ կատարելապէս ոչն-
ացնելու համար: Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Ար-
կղիկի 1/4 արժէ 60 կ.:

Հեղուկ բաղլին ջն երի դէմ: Սրուակի գի-
նը, միջինով միայն 1 րուպլի:

Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի: Դո-
գիւաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում էՎ. Գ. Բ. Վ. Ս. Կ. Դ. զեղատան ապրանքների մագա-
ղինում, «Լժնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը:

Բիւս. Գուտման
20—100

ՄԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՑ ցանկանում է ՊԱՇՏՈՆ ունենալ հայոց դպրոցներում: Պայմանների մասին
դիմել «Մշակի» խմբագրատանը: 1—3

Գէորգեան ձեմարանի վկայական ունեցող մի երիտասարդ, ուսուցչի պաշտոն է ուզում ունե-
նալ հայոց դպրոցներում: Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրութեանը: 1—3

ՎԱՅԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՑ, ցանկանում է ՌՈՒՍԱՅ ԼԵՂՈՒՈՒ ՈՒՍՈՒՑԻՑ
պաշտոն ունենալ հայոց դպրոցներում: Դիմել «Մշակի» խմբագրութեանը պայմաններ
խմանալու համար: 1—3

ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Էլէկտր-Մելանգ.

Մագերի արագ և
առանտ բուսաց-
նելու համար և
նրանց պահպանե-
լու թափվելուց: Գի-
նը 2 ր. սրուակի
համար, գործածու-
թեան հրահանգի
հետ միասին, ուս-
սերէն, ֆրանսերէն
և գերմաներէն լե-
զուով:



Բալզամ—Eu-
genie. Դափնեան
և պալակի փունջի
ծաղիկներից, Ե-
րեան, շիլիքին և
ձեռքերին քնք-
շուկիւն և փափ-
կութիւն, նոյն-
պէս և մարմարի-
տեի սպիտակու-
թիւն տալու հա-
մար, շուշանի և
վարդի անուշա-

հոտութեամբ, ն յի պէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրու-
ակի համար, գործածութեան հրահանգով ուսուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրակոշի—Eugenie. Տեղուկ, թուշերին և ականջներին ընկալան վարդի գոյն տալու, որ չէ
փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի ջրով: Մագերի-
վում է մանական թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործա-
ծութեան հրահանգով ուսուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կօմիտիական արդիւնքները բժշկական վարդութեան վկայութեամբ, չեն պա-
ռւնակում իրանց մէջ որ և է վաճառակար նրկերի:

Բէրթա Րիս.

ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆ ՍՍԱՅԱԾ ՊՈՍՏԱԴ

Խակական «Pasta Eugenie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատա-
հող ուրիշ անախտօք երևոյթների դէմ: Ցախի է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և
գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-զիլիցերիկան պօմադ պերուական բալզամից, մագերի պնդացնելու, խտացնելու և մե-
ծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:

Ձեռքերի պօմադ: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.: Խուրանչիւր սրուակի վրա գտնվում է
պաշտպանողական գրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Խակական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի, Գ. արկղիկի, միջինով 1 ր. 50 կ.
առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մագերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիւս
Գուտմանի» գործարանին:

Գիւաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում էՎ. Գ. Բ. Վ. Ս. Կ. Դ. զեղատան ապրանքների մագաղ-
նում, «Լժնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը:

68—100

ՄԻ ՎԱՐՁՈՒՅԻ, որ աւարտել է Թիֆլիսի Գալեանեան դպրոցը, ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒՈՒ
ՄԱՆԱԿՈՐ ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ: ՀԱՄԱՁԱՅՆ Է ՆՈՅՆՈՒՄ ՄՆԱԼ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ ԵՒ ԳՈՒՍ-
ՈՒՆ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԵՏ: Հասցեն խմանալ «Մշակի» խմբագրատանը: 3—5

Բժշկական ԳԻՏԻՈՐ ՏԵՐ-ՄԻԿԱՅԵԱՆ ՏԵՐ-ԳԻՏԻՈՐԵԱՆՑ ընդունում է հիւանդներին ՆԵՐԲԻՆ
և ՎԻՐԱՐՈՒԹՅԱՆ հիւանդութիւններով, ամենայն օր, առաւօտեան 10—11 ժամ և երեկոյեան
5—6 ժամ, իր ընկալանաւոր, կաթօղիկայ եկեղեցու հանգէս, Սահաթաղովի տանը, № 3:

Նոյնտեղ մանկաբարձուհի և ծաղկահատուհի տիկին ԿԼՈՏԻԴԱ ԳՐՈՒԼԵՐՈՒՍԵՐ-ԳԻՏԻՈՐԵԱՆՑ
ընդունում է ամենայն օր յղի կանանց և երեխաներին:

Докторъ медицины Григорій Никитичъ ТЕРЪ-ГРИГОРЯНЦЪ принимаетъ больныхъ по
внутреннимъ и хирургическимъ болѣзнямъ, ежедневно отъ 10—11 часовъ утра и 5—6 часовъ
вечера, на Старо-Католической улицѣ, домъ № 3, Саатсазова.

Тамъ-же АКУШЕРКА и ОСПОПРИВВАТЕЛЬНИЦА Клотилда Людовиковна ГРОЛЛЕРО-
ТЕРЪ-ГРИГОРЯНЦЪ принимаетъ ежедневно беременныхъ женщинъ и прививаетъ оспу.

3—3

ՄԻ ԵՐԵՆԱՆԱԿԻ, որ աւարտել է Ներսիսեան դպրանոցը, ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՍՈՒՑԻՑ
ՊԱՇՏՈՆ ՈՒՆԵՆԱԼ հայոց դպրոցներում: Հասցեն հարցնել «Մշակի» խմբագրատանը:
2—3